Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2076

24
И-96

ін. р

2010

24
Ц-96

24
Ա-96
11360

ՀՐԱՄԱՆԱՒ
ՍԴԾՕՓԴ
ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

2001

200
384-ՍՐ
Գ. ԲԱՐՈՋ
ՇԱՄԱԽԻՈՅ ԵՒ ԱՂԱՆԴԻՈՅ
ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՅ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ (ՄԱՏԹԷՈՍԻ ԺԳ.)
19333

«Ե· 17· Եւ եղև ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր՝ և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին՝ որք ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոյ և Հրէաստանի և Երուսաղէմի՝ և զօրութիւն Տեառն էր ի բժշկել զնոսա։ 18· Եւ ահա արք բերէին մահճաւք զայր մի՝ որ էր անդամալոյծ՝ և խնդրէին զնա մուծանել ի ներքս՝ և դնել առաջի նորա։ 19· Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ ո՞ր մուծանիցեն զնա ի ներքս՝ վասն ամբոխին՝ ելին ի տանիս՝ և ի ցուցն կախեցին զնա՝ և իջուցին մահճաւքն հանդերձ ի մէջ առաջի Յիսուսի։ 20· Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա· Ա՛յր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ 21· Սկսան խորհել գրիչքն և փարիսեցիքն՝ և ասեն՝ ո՞վ է սա որ խօսի զհայհոյութիւնս· ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աստ-

ուած։ 22. Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդսն նոցա, պատասխանի ետու և ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ի սիրտս ձեր։ 23. Զի՞նչ դիւրագոյն է. Ասել թոդեալ լիցին քեզ մեղք քո՝ եթէ ասել՝ Արի՛ և գնա։ 24. Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի՝ թոդուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն — Քեզ ասեմ՝ արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո։ 25. Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ առ զիւրև յորոյ վերայ անկեալն գնէր՝ գնաց ի տուն իւր՝ և փառաւոր առնէր զԱստուած։ 26. Զարմանք կալան զամենեսին՝ և փառաւոր առնէին զԱստուած. լի եղեն ահիւ՝ և ասեն. Եթէ տեսաք այսօր նոր նշան։

«27. Եւ յետ այնորիկ ել անտի՝ և եհան մաքսաւոր մի՝ որում՝ անուն էր Ղևի՝ զի նստէր ի մաքսաւորութեան՝ և ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։ 28. Եւ թողեալ զամենայն յարեաւ գնաց զկնի նորա։ 29. Եւ արար ընդունելութիւն մեծ նմա Ղևի ի տան իւրում՝. և էր ժողովուրդ բազում՝ մաքսաւորաց՝ և այլոց՝ որ էին բազմեալ ընդ նոսա։ 30. Եւ արանջէին փարիսեցիքքն և դպիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն

նորա՝ և ասէին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք։ 31. Պատասխանի ետու Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ո՛չ են պիտոյ բժիշկք՝ ողջոյ՝ այլ՝ հիւանդաց։ 32. Ո՛չ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս՝ յապաշխարութիւն։ 33. Եւ նոքա ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն ասէր՝ և խնդրուածս առնեն՝ նոյնպէս և փարիսեցւոյն. և քոյքդ ուտեն և ըմպեն։ 34. Եւ նա ասէ ցնոսա. Մի՞թէ կարող է՞ք մանկանց առագաստի՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ՝ հրաման տալ պահել։ 35. Եկեսցեն աւուրքն՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն՝ ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ։ 36. Այլ և առակ մի առ նոսա. թէ ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ այ՝ և զնորն պատառէ՝ և ընդ հնոյն չմիաբանի կտրելոյն՝ որ ի նորոյն։ 37. Եւ ոչոք արկանէ գինի նոր ի սիկս հինս՝ ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր զսիկսն հինս՝ ինքն հեղուլ՝ և սիքքն կորնչին։ 38. Այլ՝ գինի նոր՝ ի սիկս նորս արկանելի է՝ և երկոքին պահին։ 39. Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և կամիցի զնորն՝ քանզի ասէ. թէ հինն քաղցրագոյն է»։

Սուրբ Աւետարանի այս ընթերցուածն՝ երկրորդ տետրումն զետեղուած ընթերցուածի շարայարութիւնն է։ Նախորդ ընթերցուածն աւարտեցաւ այն բովանդակութեամբ՝ թէ Յիսուս Փրկիչ՝ ձկանց ըսքանչելի որսէն ետքն Գալիլիայ քաղաքներէն մին մտաւ. և քաղաքի մուտքումն մի բորոտ սրբեց, ժողովարանումն քարոզեց, և շատ հիւանդներ բժշկեց. ժողովուրդներն հետզհետէ կշատանային լսելու և բժշկուելու մտքով, և Փրկիչն հեռացաւ մի անբնակ տեղ, և կաղօթէր։ Լսենք և այժմ այս ընթերցուածի թարգմանութիւն ու բովանդակած իմաստի բացատրութիւնն։

«17. Եւ ի մի օր ինքն (Յիսուս) կուսուցանէր, և փարիսեցիներն ու օրէնից վարդապետներն նստած էին, որ եկեալ էին ի Գալիլիացոյց Յոլորք տպատներէն, և Երուսաղէմէ ու Լրտուպէի (տալտներէն). և Աստուծոյ զօրութիւն՝ ընուս բժշկելու էր (կբժշկէր)։

Փրկչին վարդապետութեան և կատարած բժշկութեանց համբաւն հասել էր արդէն և Յերուսաղէմ և Հրէաստանի միւս քաղաքներն։ Այս համբաւն՝ որ միևնոյն ժամանակ կհռչակուէր թէ Յիսուս է Քրիստոսն, հետաքրքիր եղաւ և փարիսեցիներուն և օրինաց վարդապետներուն, որոնցմէ ևս եկել էին ամեն քաղաքներէ, որ ստուգեն, թէ արդարև Քրիստոսն է։ Այս առաջին անգամն է, որ փարիսեցիներն ու օրինականներն կժողովին Յիսուսի ուսումն լսելու և քննելու։ Մինչ Յիսուս՝ իւր աղօթքն աւարտած և անապատէն դարձած, Կապառնաում քաղաքում մի տան մէջ կուսուցանէր։ Թէ փարիսեցիքն և թէ օրինականքն գիտէին, թէ մարգարէից գուշակած ժամանակն արդէն մօտեցել է, և Քրիստոս եկած պիտի լինի, և ինչպէս շատ մարդիկ, նոյնպէս և սոքա կսպասէին, թէ ո՞ւր տեղ պիտի յայտնուի Քրիստոսն։ Յովհաննէս Մկրտչի քարոզութիւն լսողներէն շատերն կկարծէին, թէ նա է Քրիստոսն, որուն և փարիսեցիքն հարցափորձեցին, նա ճշմարտութեամբ խոստովանեցաւ, թէ ինքը չէ Քրիստոսն, և թէ Քրիստոսն եկած է, և ձեր միջումն է։ Յովհաննու այս վկայութենէն ետքն է, որ փարիսեցիք կը մերձենան զՅիսուս քննելու։ Ունկնդիր կլինին նորա վարդապետութեան, և ականատես կլինին կատարած բժշկութիւններին. «Զօրութիւն Տեառն էր ի բժշկել զնոսա»։

«18. Եւ ահա ոմանք մարդիկ՝ հանիցեալ (վերցուցած) զի մարդ կբերէին, որ անդամալոյծ էր. և ընդ ներս դրսընելոյ տեղ կգտնէին, որ նորա (Յիսուսի) առաջը դնեն։ 19. Եւ երբ չէին գտներ զի տեղ՝ ուստի ներս դրնեին զնա՝ աստիճանն ուստի-ընեան պատշուառեն, տանիքն ելան, և ցուցէին կոխելոյն զնա, և հանիցեալ զնա ներքն ելոյն Յիսուսի առաջն։

Այնչափ հիւանդներ բժշկուած էին, որ այլ ևս անդամալոյծներն սկսեցին բերել. այնպիսի անդա-

մալոյծներ՝ որ դոշակով միայն կարելի է վերցնել։ Այս մի անդամալոյծը բերողներուն հաւատքն՝ այնչափ մեծ էր և ուժգին՝ որ չկարողացան մի քիչ համբերել՝ մինչև ամբոխը ցրուէր և ճանապարհ բացուէր՝ և ապա իրենց հիւանդը ներս մտցնէին՝ կամ Յիսուս տնէն դուրս ելլէր՝ և առաջը դնէին։ Ամբոխին ազատ էր տան տանիքը միայն՝ տանիքն ելան այս մարդիկը՝ ծակեցին տան քարուկիր յարկը՝ և իրենց հիւանդն մահիճով վար կախեցին մինչև Յիսուսի առջևը։ Այնպէս կհաւատային՝ թէ իսկոյն ձեռք պիտի դնէ՝ և բժշկէ՝ ինչպէս ուրիշ շատ հիւանդներին արել էր։

«20· Եւ ցիսուս տեսեալ նոցա հաւատսն՝ և ասաց նորան (անդամալոյծին)՝ ո՛վ մարդ, են մեղքերդ թողութիւն լինին քեզ»։

Անդամալոյծը բերողներուն կատարեալ հաւատքը տեսաւ Յիսուս՝ որ մինչև տան յարկը կքանդեն իրեն հասցնելու՝ այս հաւատքը գրաւական առած՝ անդամալոյծին մեղքերը կներէ նախ։ Անդամալուծութեան գլխաւոր պատճառներն են բնական կարեաց չափազանցութիւնն՝ այն է՝ ուտելու՝ խմելու և այրութեան չափազանցութիւնն՝ նոյնպէս նախանձու՝ և բարկութեան սաստկութիւնն՝ որոնք ծանր մեղք են· անդամալոյծին այսպիսի մեղքերն (ինչ որ ունէր) թողուց Յիսուս։ Փրկչին այս արձակումն՝ արդէն իսկ բժշկութիւն էր անդամալոյծին՝ բայց նա

դեռ մահիճումն ինկած էր· Փրկչին մի հրամանն ևս պէտք էր՝ որ բժշկութիւնն՝ ամենքին յայտնի լինէր։ Բազմութիւնն աչքերնին ուղղած կնայէին՝ թէ ինչպէս պիտի բժշկէ անդամալոյծն՝ իսկ փարիսեցիք և օրինաց վարդապետներն՝ որ առաջին բարձերումն նստած են՝ իրարու կնային՝ ու մէկմէկու կքրթմնջեն։

«21· Ասէին իւրեանք՝ դարձեալ ասեցին՝ ասացին՝ ո՞վ է սա՝ որ այս հայհոյութիւնքն խօսի՝ ո՞վ կարող է մեղքս թողուլ (ոչ ոք չէ կարող)՝ բայց միայն Աստուած։

Փարիսեցիք և դպիրներն կամ օրէնսգէտներն՝ այսպէս կխորհեն՝ զետական քահանայութեան տրուած քաւութեան սահմաններն ի մտի ունենալով՝ մեղաւորն՝ նուէր կմատուցանէր՝ և քահանայն նորա վերայ քաւութեան օրէնքն (արարողութիւնն) կկատարէր՝ և Աստուած կներէր մեղաւորին՝ ըստ հաւատոց էր այս թողութիւնն՝ և Աստուած միայն կթողուր։ Այստեղ Յիսուս կերևի մեղմիկ մարդու կերպարանքով՝ և կուսուցանէ Աստուծոյ օրինաց ճանապարհն ու բարոյականը։ Փարիսեցիք չեն տեսներ Սինայի տեսիլը՝ և ոչ կյիշեն այն տեսլեան պատճառած ահաբեկութիւնն՝ և թէ ժողովուրդը ցանկացաւ և խնդրեց՝ որ այլևս չտեսնէ Աստուծոյ տեսիլը՝ և չլսէ այն ձայնը՝ մի գուցէ մեռնի՝ և թէ Աստուած ընդունեց ժողովրդեան այս

խնդիրը, և խոստացաւ իրենց եղբայրներէն յարուցանել Մովսիսի պէս մի մարգարէ—օրէնսդիր, որ մեզմիւ տայ Աստուծոյ պատգամներն նոր ուխտի պատգամներն, որոնք ո՛չ թէ քարէ տախտակներու վերայ պիտի գրուէին, այլ մարմնեղէն տախտակներու վերայ պիտի գրուէին, նոյն իսկ մարդկան սրտերումն պիտի գրուէին.

«Տայ զօրէնս իմ՝ ի միտս նոցա
և ի սիրտս նոցա գրեցից զնոսա. . . .
զի քաւիչ եղեց անօրէնութեանց նոցա.
և զմեղս նոցա ո՛չ ևս յիշեցից»։ (Երեմ. ԼԱ. 33. 34)։

փարիսեցիք չէին յիշեր, ո՛չ Մովսիսի խոստումն, և ո՛չ Երեմիայի այս մարգարէութիւնն, վասնորոյ և կտրանջեն, և Յիսուսի աստուածային զօրութեան յայտնուելուն չսպասած, նորա աստուածային խօսքն՝ հայհոյութիւն կհամարեն, կվրդովին, և կվրդովեն մինչև իրենց խորհուրդն յայտնի կլինի Փրկչին։

«22. Յետոյ երբ նոյա խորհուրդքնէրն իմացաւ, պատասխան տուաւ և ասաց նոցա՝ Ի՞նչ կխորհիք յիր սրտերուն։

Փրկիչն՝ ըստորում՝ լոյս է, և ճշմարտութիւն կխօսի, չթողուր որ ծածուկ քրթմնջեն իւր խօսքերուն վերայ, և այս հարցումով առիթ կուտայ փարիսեցւոց, որ յայտնապէս խօսին։ Այս խոսեցան ի հարկէ, թէ այսպէս լոկ խօսքով մեղք թողուլ չլինիր։ Աստուած միայն կարող է թողուլ մեղքերն և մեղաց հետևանքն եղած հիւանդութիւնը վերցնել. իսկ թողութեան օրէնքն ուրիշ արարողութիւն ունի, զոր պիտի կատարէ քահանայն ըստ օրինաց, և Աստուած պիտի թողու մեղքերն։ Թերևս և աւելցուցին իրենց խօսքն և ասացին, թէ մարդուս՝ դիւրին է խօսել Աստուծոյ խօսքը, բայց դժուար է կատարել։ Եւ երբ չէ կարող մարդ Աստուծոյ գործը կատարել, և նորա խօսքն կխօսի իբրև Աստուած, այն հայհոյութիւն է, և ո՛չ Աստուծոյ օրինաց ուսումն։ Փարիսեցւոց այս մտքով պատասխանին վերայ՝ նոր հարցում մի ևս կհարցնէ Յիսուս։

«23. Ո՞րն է դիւրին.—Ներեալ լիցին քեզ մեղք քո—ասէ՞ն. եթէ—Արի՛ և գնա՛—ասէ՞ն։

Կհարցնէ նոյն իսկ փարիսեցիներուն և դպիրներուն, թէ այս երկու խօսքին ո՞րն դիւրին կերևի ձեզ։ Այս հարցման կպատասխանեն նոքա, թէ Արի՛ և գնա՛ ասելն աւելի դժուարին է։ Այսպէս կերևէր նոցա աչքին, ըստորում՝ խօսքի կատարումն՝ եթէ կատարուէր, տեսանելի պիտի լինէր, մինչդեռ Ներեալ լիցին քեզ մեղք քո խօսքին կատարումն՝ հոգեկան մի գործողութիւն է, և աչքի աներևոյթ, վասնորոյ և խարեբաներն ևս կարող են դիւրութեամբ ասել։ Այլ ըստ Յիսուսի՝ առանց մեղքը թողելու, նոյն մեղաց արդիւնքն եղած անդամալու-

ծութիւնն վերցնել չէր կարելի։ Այսու հանդերձ՝ փարիսեցւոց և գոնուած օրէնսգէտներուն աչքին դժուար երևցաց խօսքն ևս կկրկնէ Տէրն, պայմանելով՝ որ նոյն դժուար խօսքի կատարումէն ճանաչեն և գիտնան, թէ Յիսուս՝ երկրիս վերայ իշխանութիւն ունի մեղքերը թողելու, և այսպէս կասէ։

«24. Այլ որպէս զի գիտասջիք, թէ զորդին մարդոյ՝ երկրի վերայ մեղքերը թողելու իշխանութիւն ունի, ասաց անդամալոյծին. ելի՛ կա՛ց, վերկա՛ց, հանի՛ր զ՝ սա, և գնա՛ յտունդ քո»։

Փրկիչն՝ իւր պայմանած ծանրագոյն կամ դժուարագոյն խօսքն ևս ասաց անդամալոյծին, մինչդեռ փարիսեցիք և դպիրներն կսպասէին, թէ իրենց կարծիքը պիտի հաստատուի, և ժողովուրդն ալ պիտի ճանաչէ, թէ Յիսուս՝ հայհոյիչ է, և ընդդէմ Աստուածային օրինաց՝ մեղքերը թողելու կելլէ, կամ՝ ինքզինքն Աստուծոյ տեղ կդնէ. մինչդեռ այս մտքով և յուսով լարուած, և աչքերնին տնկած կնային անդամալուծին, և Յիսուս կգտանայ անդամալուծին և կհրամայէ մի և նոյն մարդկային մեղմ և քաղցր բարբառաւ, թէ ելի՛ կա՛ց, հանի՛ր զ՝ սա, և գնա։ Ամենքին աչքն՝ Յիսուսի վերայէն դարձաւ դէպ ի հիւանդ անդամալոյծին վերայ, այն կարծիքով, թէ անկարելի է որ անդամալոյծն ինքնիրեն կանգնի, բայց ի՞նչ կտեսնեն։

Ահա այսպէս կշարունակէ պատմագրել աւետարանիչն։

«25. Եւ նոյն ժամուն յոտն ելեալ վերկացաւ, վերուն տարեալ (հանին) զրոսն վերայ ինչոցն զորս էր, իւր գոնելոյ, և գնացեալ ի տունս իւրոյ։

Աւետարանիչը՝ զանց կանէ պատմել, թէ այս եղելութեան վերայ՝ փարիսեցիքն ինչ արին, ինչ խօսեցան, ինչ խորհեցան, կամ թէ օրինականներն՝ ի՞նչ խորհեցան, ափիբերան եղա՞ն արդեօք, ինչպէս որ Յիսուս պայմանեց։ Թէ փարիսեցիք և թէ դպիրներն՝ Աստուածաշունչ գրքերէն՝—օրէնքէն, մարգարէներէն և սաղմոսներէն՝ այն բաներն միայն գիտէին և կիսօսէին ու կգործէին, ինչ որ իրենց շահուն—հացին և պաշտօնին կվերաբերէր։ իսկ Աստուծոյ ուխտին և հաճոյից վերաբերեալ պատգամներն՝ թերևս և ո՛չ ի մտի ունէին և ո՛չ մին նոքա չյիշեցին։ օրինաց այն պայմանը՝ զոր կհաստատէ Մովսէս՝ իբրև նշան՝ որով պիտի ճանաչէին, թէ Մեսիան Աստուծոյ պատգամը կիսօսի, թէ կամքարշտի, և իւր կամքով կիսօսի, կամ թէ ուրիշ աստուածոյ անունով կիսօսի. փարիսեցիք չյիշեցին Մովսիսի սահմանած այս նշանը, որ յացայտ կերպով կասէ. «Ինչ որ խօսի Մարգարէն (Մեսիան) Աստուծոյ անունով, և չլինի այն խօսքը կամ չպատահի, ա՛յն խօսքն է զոր Աստուծոյ խօսած չէ, այլ՝ մարգարէն ամբարշտութեամբ (այսինքն իրեն կամովն, կամ

«ոչինչ սոսոսաՁՆԵրս անՁանով) խօսել է. Ի՛ նէրէ+ նՀա». (Բ. օր. ԺԸ. 22)։ Օրինաց այս պայմանին ծանօթ օրինականներն և փարիսեցիներն՝ անդամալուծի վեր կենալն և մահիճը ժողովելն ու գնալն տեսան, որով և յայտնապէս իմացան, թէ Յիսուսի խօսած խօսքն՝ կկատարուի, ըստ այսմ՝ և Աստուծոյ խօսքն է, որ կիսօսի կարօտեալներուն. «Թողէալ լիցին +եՀ Դեղ +ո. Ա.էյ՝, ա՛ռ զՀանՁօ +ո, ԵՒ էրթ է տուն +ո». այս երկու խօսքին միանգամայն կարօտ էր անդամալոյծն, որ բժշկուէր, և երբ մեծ ամբոխի ներկայութեան խօսեցաւ Յիսուս այս խօսքերն՝ իբրև Աստուծոյ խօսքեր, և խօսքն իսկոյն կատարումն առաւ, փարիսեցիք այլ ևս խօսելիք կամ՝ խորհելիք պիտի չունենային այստեղ, և պիտի հաւատային, թէ Յիսուս՝ օրինաց և մարգարէից խոստացած Քրիստոսն է, որ ժողովրդեան մեղքերը պիտի վերցնէ, և յայտնապէս կիսօսի Աստուծոյ խօսքերն, և կգործէ գործերն, գործեր՝ որ օրինաց հաստատած նշաններն են, և կապացուցանեն, թէ Յիսուսի խօսքերն Աստուծոյ պատգամներն են։ Բայց ինչպէս կերևի ուրիշ սքանչելեաց ընդդէմ՝ փարիսեցւոց յամառութիւնն, որ տեսնելով հանդերձ՝ թէ մարդիկներում՝ անկարելի գործերն իսկոյն և եթ կկատարուին Յիսուսի խօսքով, և չեն հաւատար, ու դարձեալ կՁանան, որ զՅիսուս՝ օրինազանց ցուցնեն, և այս՝ կՁանային հաստատել օրինաց

պատգամներու այս և այն բառերուն միայն յարելով և օրինաց ոգւոյն դէմն խսպառ կուրանալով։ Փարիսեցիք այստեղ ևս չՀաւատացին Աստուծոյ փրկութեան խօսքին, թէպէտ և գիտէին, թէ մարգարէից ցոյց տուած ժամանակն լրիւ Հասած է, և զՔրիստոս կինտռէին։ ՉՀաւատացին փարիսեցիք, բայց միամիտ ժողովուրդն զգածուեցաւ, տեսաւ Աստուծոյ լոյսը։

«26. Զարմանէր բռնեց ամենեքին, և զՍոսոսաՁ կՁաՁաՁէին, ասով լեցուեցան, և ասացին, թէ այսօր նոր նշան տեսանք»։

Զարմացաւ միամիտ ժողովուրդը, իբրև թէ Աստուծոյ զօրութիւնն յայտնապէս տեսան և ճանչցան։ այնպէս կօրՀնէին զԱստուած. նորա փառաց մեծութիւնը կիսօսէին, ամենակարող խօսքին կՀաւատային։ Զարմանքն այնչափ սաստիկ էր, որ բացատրելու խօսք չէին գտնէր, ահի և դողի բռնուեցան՝ երբ միտք արին, թէ Աստուած իրենց մէջն է, իրենց մեղքերը կթողու, և հիւանդութիւնները կվերցնէ, ուրիշ ասելիք չունէին, բայց միայն, թէ Ա.յսօր նոր նշան տեսանք։ Եւ ոմանք՝ թէ Ա.յսպէսի բան էրթէ+ չտեսանք. (Մարկ. Բ. 12.)։ Եւ ոմանք կՁաՁաՁէին զՍոսոսաՁ, որ այնպիսի էշխանութիւն տուել է մարդոց» (Մատթ. Թ. 8)։

Այս սքանչելիքն՝ աւետարանիչը գրի կառնու, և կթողու ապագային ի գիտութիւն. ահաւասիկ կը-

դարդանք և կհասկանանք այնպէս, ինչպէս թէ աչքերնուս առաջը կատարուած տեսնել. համակերպենք և մենք միամիտ ժողովրդեան լուրջ զարմանքին, և տեսնելով թէ մարդիկներէն անհնարին եղած գործեր կկատարուին Փրկչին միայն խօսելովն, հաւատանք Աստուծոյ ամենակարող զօրութեանը, մեղքերը սրբելու զօրութեանը, հիւանդութիւնները վերցնելու զօրութեանը, կեանքը զօրացնելու և հոգիներն լուսաւորելու զօրութեանը։ Երջութեամբ խորհենք Աստուծոյ կատարած այս սքանչելեաց վերայ, եթէ կարելի է միտք անենք և այն սքանչելեաց վերայ, զորս յիշեց աւետարանիչն մինչև այստեղ, թէ ամեն տեսակ հիւանդներն կբերէին, դեւերը կելլէին, ջերմը կկտրէր, հիւանդներուն ձեռք կդնէր և կբժշկէր, բորոտը կսրբուէր, եթէ այս հիւանդութիւններէն ոմանք ըստ ինքեան ևս կվերնան հիւանդէն՝ ժամանակ մի անցնելէ ետքը, տեսնենք նաև, թէ այս հիւանդութիւններն կփարատին՝ Յիսուսի լոկ սաստելովն, դեւերն աղաղակելով կելլեն, և Աստուծոյ որդւոյն անունը կը համբաւեն, անդամալոյծը՝ որ երբէք տեսնուած չէ, թէ առողջանայ, այս տեղ կտեսնենք, որ Յիսուսի հրամանովն իսկոյն ոտք կելլէ, մահիճը կժողովէ կվերցնէ, և կերթայ. այնպիսի սքանչելիք, որ մարդիկներէն անկարելի է, և կհամեմատի արարչագործութեան յայտնութեան պատգամներուն—

Ասաց Աստուած, և հասարակեցաւ։

Հաւատանք միամիտ սրտիւ, թէ Աստուծոյ որդին յաշխարհ եկաւ, Աստուծոյ արքայութիւնը քարոզեց, մեղքերը վերցուց, զմարդիկ սրբեց, հոգիները լուսաւորեց, արքայութեան ժառանգներ պատրաստեց, արքայութեան օրէնքներն՝ քարէ տախտակներէն հանեց ու մարդկան սրտերումն ու միտքերումն դրոշմեց, որ միշտ լոյս տան կենաց ի կեանս գնալու։ Աստուծոյ գործերը տեսնողներուն աչքերը միայն երանելի են, իսկ չտեսնողներն՝ եթէ հաւատան, կատարելագոյն ևս երանութեան արժանի են, ինչպէս որ ինքը Տէրը կասէր իւր աշակերտներուն. (Մատ. ԺԳ. 16. Ղուկ. Ժ. 23. Յովհ. Ի. 29.) Երանի՛ աչքերնուդ՝ որ այս բաները կտեսնէք . . . . բայց երանի՛ անոնց, որ չտեսած կհաւատան։ Իրրև ճշմարիտ քրիստոնեաներ—Քրիստոսի հետևողներ, միայն չզարմանանք տիրոջ ամենակարող զօրութեան գործած սքանչելեաց վերայ, այլ թողունք մեր աշխարհային ցանկութիւններն, մարմնական յօժարութիւններն, և Պետրոսի, Յակոբոսի և Յովհաննիսի օրինակին հետևենք, որոնք թողուցին իրենց ստացուածքն ու վաստակն, և գնացին Յիսուսի ետևէն, որպէս զի միշտ լսեն նորա կենաց խօսքերն, սորվին յաւիտենական կենաց՝ անմահ կենաց ճանապարհն ու բարոյականը, հետևենք առաքելոց, և մտադրութեամբ ունկնդիր

լինենք Աստուծոյ—Փրկչին շարունակած սքանչելեացն, և լուսաւորուենք հոգւոյ աչքով, ու տեսնենք անմահ կենաց առաւելութիւնն, և աշխարհիս ունայնութիւնն։ Լսենք մտադրութեամբ սուրբ աւետարանի շարայարութեան թարգմանութիւնն ու նոցա մէջ բովանդակուած իմաստութեանն հասու լինենք, մինչև մեր սրտերուն աղդէ Աստուծոյ փրկագործութեան շնորհքն պարգևն, և որուն հետևենք, որ ձեռք բերենք, և չկորսնցնենք։ Աստուծոյ շնորհքը կորուլ կատարեալ հաւատք ունեցող մարդուն, կատարեալ հաւատքն կ՚յառաջանայ Աստուծոյ խօսքին ունկնդրութենէն, և Աստուծոյ խօսքը կաւանդէ մեզ միայն Նորա Աւետարանը, լսեցէք Աւետարանին թարգմանութիւնն, ու միտք առէք, ձեր մտքերը թող խորհեն միայն Աստուծոյ խօսքերովն մատակարարուած շնորհաց վերայ, շնորհք, որ կսրբէ մեղաւորները, կլուսաւորէ կոյրերը, հիւանդութիւնները կվերցնէ, և ողջախոհութիւն կսփռէ, մահու փոխանակ կեանքը կը զօրացնէ, մեռելոց յարութեան յոյսը կիրագործէ, և յաւիտենական կենաց կտանի։ Նաև այս աշխարհիս սակաւ ժամանակեայ կեանքն՝ մարմնական ախտերէն կը փոխարկէ հոգևոր կենաց, մարմնական կարօտութիւններն կվերցնէ, և հոգևկան խաղաղութիւն ընդհանուր կտարածէ, հաւասարութիւնը, անկարօտութիւնը, սիրով շաղկապուած ընկերու-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
7/XI 1922
Հայկական Գրադարան
Армянская Библиотека
L004
19333

թիւնը, միոյն Աստուծոյ արարածոյ բանական մարդուն՝ մի ընդանիք և մի եղբայրութիւն։ Ուստի՛ սուրբ Աւետարանին, և հաւատացէք, որ այս շնորհքները կվատակարարէ հոգևոր մարդուն, Աստուծոյ հոգւոյն հաղորդ եղող մարդուն։

«27. Ահա՛ եկաւ ելաւ այն թեղեն, և մատաղաւոր մի դեռաւ, որոյ անունը Ղ.ևի էր, և մատաղաւորութեան պաշտօնեայ նստած էր։ Ն՝ ասաց նմա, Ելա՛ր։
28. Ն՝ թողեալ զամենայն, յարեաւ գնաց զկնի նորա։

Այս Ղևին մաքսաւոր էր, այսինքն մի մաքսատան գլխաւոր էր, աշխարհիս թագաւորութեան տուած իշխանութեանն արժանացած մի իշխան էր, թագաւորական օրէնքով և հրամանով հաստատուած մի տեսակ հարկի պահանջող էր։ Կարիաւնայում՝ քաղաքի սահմաններումն՝ արքունական իշխանութիւն բանեցնող մի անձն էր, և ժողովուրդը կը հնազանդէին, ու նորա նշանակած տուրքը կվճարէին, այս Ղևին՝ իւր ուղղածին պէս կսահմանէր մաքսը, և կառնուր, և ինչպէս ընդհանուր պատմական ստուգութիւն է, այն ժամանակուայ մաքսաւորներուն պէս հարստանալու ցանկութեամբ այն պաշտօնը գնել էր։ ընդհանուր հրէից մէջ ատելի մեղաւորներէն — յայտնի և հրապարակական մեղաւորներէն մին էր։ Այսպիսի մի մեղաւոր մարդու կկանչէ Յիսուս. — ինչո՞ւ. — Եկէ՛ք էլ՝ ասէ։ իրեն պիտի աշակերտեցնէ։ Քանի՞

զարմանալի է Փրկչին շնորհքն՝ օրէնսդէտներ կը տեսնէ՝ զանց կանէ՝ որոնք Աստուծոյ կտակարանի պատգամներն ուսած են՝ Աստուծոյ հաճոյիցը ծանօթ են՝ և դիւրաւ պիտի աւարտեն իրենց աշակերտութիւնն՝ եթէ Յիսուս կոչէ և ուսուցանէ. բայց չկանչեր այսպիսիներուն՝ աղքատ ու վաստակած ժողովուրդներուն զրկող մաքսաւորը կկանչէ՝ Որչափ որ զարմանալի է տիրոջ կոչումն՝ այնչափ զարմանալի է աշխարհիս մարդկան՝ և մաքսաւորին հնազանդութիւնն՝ Մաքսաւորը կթողուր ամեն բան — մաքսատունը՝ չափելու և կշռելու ապրանքները՝ առած մաքսերն՝ արծաթներն ու ոսկիներն՝ և հետզհետէ առնելիքներն՝ և կերթայ Փրկչին ետևէն. ո՞ւր. — Փրկիչը գիտէ՝ ուր որ պիտի տանի՝ Փրկիչն իրրև Որդի Աստուծոյ՝ սրտագէտ է՝ և կճանաչէ մարդկան հոգիներն՝ և թէ ո՞ր հոգւոյ մէջ արդիւնաւոր պիտի ածի Աստուծոյ արքայութեան խօսքն՝ Ղևի՝ կհետևի Յիսուսին՝ ինչպէս կհետևէին և երեք ձկնորսներն՝ և իւր տունը կհրաւիրէ զՅիսուս՝

«29· Եւ ինքն ընդունելոյն զնա Ղևի (Յիսուսի) Ղևի է-ր դուռն մեջ՝ և շատ ժողովուրդ կար մաքսաւորներու և ուրիշներու՝ որ ուչան նստած էին նոցա հետ՝

Ղևի՝ մեծ ուրախութիւն կհամարի իրեն՝ և իւր ընկեր մաքսաւորներն ու ուրիշ մեծամեծներ կհրաւիրէ ճաշի՝ և մեծ ընդունելութիւն — հիւրոյթ կուտայ Յիսուսին՝ Ղևի կճանաչէ իւր հիւրի մեծութիւնն ու սքանչելիքներն՝ որոց շատերն կիա փագէին՝ որ տեսնեն մի անգամ՝ այսպիսիներն կը հրաւիրէ Ղևի՝ և կուգան կբաղմին՝ Մեծ ամբոխ կայ նաև Ղևիի տունէն դուրս՝ որոնք ներս չեն մտներ՝ և Յիսուսի աշակերտներուն հետ կվիճաբանեն՝

«30· Եւ փարիսեցիներն ու նոցա գրիչներն կոչընչէին նորա (Յիսուսի) վերայ՝ նորա աշակերտներուն (ասելով խոսէին՝ Եւ կասէին.— ինչո՞ւ համարձակ՝ մաքսաւորներուն և գողներուն հետ կուտէ կիմէ՝

Փարիսեցիներն՝ ինքզինքնին սուրբ և արդար կըհամարէին՝ և մեղաւոր համարուած մարդկանց հետ սեղան չէին նստեր՝ և նոցա կերակուրին ու խմելիքին չէին դիպչեր՝ որ չպղծուին՝ սոքա՝ և զՅիսուս և նորա աշակերտներն ևս մեղքէ ազատ համարել ձեւացնելով՝ արժան չեն համարիր՝ որ մեղաւորաց հետ ուտելու խմելու ընկերանան՝ և աւելի ևս ցանկանալով մի յանցանք համարել զայս՝ Յիսուսի վերայ՝ Ղևիի տան դրսի կողմը խոնուած՝ հեգնելով կհարցնեն աշակերտներուն՝ թէ ի՞նչպէս պիտի արդարացնէք զձեզ՝ որ մաքսաւորներուն և մեղաւորներուն հետ կուտէք կիմէք՝ Այս հարցումով յայտնապէս յանցաւոր կհամարին զՅիսուս՝ և ի մասնաւորի կհարցնեն՝ թէ ինչո՞ւ մեղաւորնե-

րուն հետ սեղան կնստի ձեր վարդապետն։ Փարիսեցւոց այս հարցն ու աշակերտաց պատասխանն՝ դրսէն ներս հասան Յիսուսի ականջն, և ասաց.

«31. Յիսուս պատասխան տուաւ նոցա, և ասաց, առողջներուն՝ բժիշկներ պէտք չեն, այլ հիւանդներուն։

Այս առակն ասաց Յիսուս, որ Փարիսեցւոց դայթակղութեան դէմ մի ազգու պատասխան լինելով հանդերձ, և մաքսաւորաց սրտին մի թեղադրութիւն էր, թէ նոքա հիւանդ էին ըստ Աստուծոյ։ Փարիսեցիք՝ այս առակէն չհասկացան Յիսուսի միտքն, և իրենց կարծիքն հաստատել կրնային, թէ Յիսուս՝ օրինաց հակառակ՝ մեղաւորաց հետ սեղան կնստի։ Փարիսեցիք չէին մտաբերեր, թէ Աստուած իւր մարգարէներն յատկապէս կուրկէր անօրինեալ թագաւորներին, իշխաններին և անօրինեալ ժողովուրդներուն ու ազգերուն, որ Աստուծոյ սպառնալեացն ու միանգամայն ողորմութեան պատգամն կտանէին, և անօրինեալներն կամ՝ կլսէին կամ՝ ոչ, բայց մարգարէներն ինչպէս որ կուրկուէին, այնպէս ալ կգնային։ Յիսուս աւելի ևս պարզաբանելով, զրքէն կրերէ նոցա դէմ Աստուծոյ մի պատգամն։

«Դնացէք ուրվեցէք, է՞նչ է Զողորմութիւն կամիմ, և ոչ զոհ» ասէն»։ (Մատթ. Թ. 13։ Ովսէ. Զ. 6.)։

Մատթէոս աւետարանիչ՝ որ նոյն ինքն Դ.ևի մաքսաւորն է, Յիսուսի խօսքերէն այս հատուածն

ևս մէջ կբերէ։ Յիսուս՝ այս խօսքն ևս ասաց, իբրև երկսայրի պատասխան, որ միապէս կազդէր՝ փարիսեցիներուն սին կեղծիքն մերժելով, և մաքսաւորներն կհրաւիրէր Աստուծոյ ամենողորմ՝ զբաղութեան ճաշակն վայելելու։ Փարիսեցիներն՝ զոհ բերող մեղաւորներն կընդունէին, և նոցա հետ կուտէին։ Իբրև թէ նոքա ի սրտէ գարձել են առ Աստուած, բայց զոհ չբերող մեղաւորին հետ չէին նստեր, որ Աստուծոյ պատուիրաններն ուսուցանեն, և յապաշխարութիւն յորդորեն։ Յիսուս իւր պաշտօնին նշանակութիւնն հաստատելով նոյն առակին և պատգամին վերայ կյաւելու և կասէ.

«32. Չեկայ արդարներն կոչելու, այլ (եկայ) մեղաւորներն՝ ապաշխարութեան կանչելու»։

Թէ Փրկչին գալստեան բուն նպատակն էր՝ մեղաւորներն ապաշխարութեան կանչելու, և Աստուծոյ հայրական գթութիւնն յայտնելու, ուրիշ շատ առակներ ևս ունի ասած, ինչպէս են կորուսեալ դրամին և ոչխարին առակները, յորում՝ գտնողին ուրախութեան չափն կյայտնէ Յիսուս՝ ասելով թէ այն գտնուածին վերայ աւելի ևս ուրախ կլինի, քան այն չկորսուածներուն վերայ։ Նոյն մտքով կյաւելու և Անառակ որդւոյն առակն, որոյ գարձին վերայ աւելի ևս ուրախ կլինի Հայրն։ Յիսուսի այս պատասխանին վերայ լռեցին փարիսեցիք և գպիրքն, և ուրիշ խնդիր մի յարուցին, և կհարցնեն.

«33. Ինչո՞ւ Յովհաննու աշակերտներն ոչ պէտք կոչեն, և խնդրուածք կանեն, նոյնպէս և փարիսեցւոց (աշակերտներն և հռչիններդ կոչեն և կիսեն»։

Ղուկաս աւետարանչի մէջ բերած այս հարցմունքն՝ այլ և այլ հանգամանքով հանդերձ մէջ կբերեն Մատթէոս և Մարկոս, որոց ելթէ մտադիր լինինք, Յիսուսի պատասխանն լաւ ևս հասկանալի կլինի։ Մատթէոս այսպէս մէջ կբերէ.

«Յայնժամ մոտեցան նորա մոտ Յովհաննու աշակերտներն, և ասացին, Ինչո՞ւ մենք և փարիսեցիներն յաճախ կոչենք, և քո աշակերտները չեն պահեր»։ (Մատ. Թ. 14)։

Իսկ Մարկոս աւետարանիչն այսպէս մէջ բերէ.

«Եւ Յովհաննու աշակերտներն ու փարիսեցիներն ծոմ էին, եկան և ասացին նորան. Ինչո՞ւ Յովհաննու...(Բ. 18)։

Այս հանգամանքներն ի միասին ի նկատի առնելով՝ յայտնի կլինի, թէ այն օրն՝ յորում Յիսուս Ղևիին տունը մտաւ և ճաշի նստաւ, ծոմ պահելու օր էր, և փարիսեցւոց դայթակղութիւնն երկու պատճառ կնկատէր. մէկմը՝ որ մեղաւորներուն հետ կնստի, և երկրորդ՝ որ ծոմ պահելու օրը կլուծէ։ Յիսուսի տուած պատասխաններովն բաւականացան փարիսեցիք, և առաջին պատճառը լուծուած համարեցին, և սկսեցին երկրորդ պատճառի մասին հարցնել, և որովհետև փարիսեցւոց աղանդին կեղծաւորութիւնն շատերուն յայտնի էր

և երես չունէին, այստեղ Յովհաննու աշակերտներն կթելադրեն հարցնելու պահոց մասին, և իրենք ևս կմիանան նոցա հետ, կցանկան, որ զՅիսուս՝ օրինազանց և յանցաւոր բռնեն. որոց կպատասխանէ Յիսուս գարձեալ առակներովը։

«Եւ նա ասաց նոցա, Դ՞ռնէ կարո՞ղ է հարսանիքի հանդիսականներն պահելու հրաման տալ՝ մինչ որ փեսան նոցա հետ է։ 35. Բայց օրերն, երբ փեսան նոցանէն կվերցուի, ապա այն օրերուն կպահեն»։

Օրինաց և մարգարէից մէջ երևցած ծոմապահութիւնները՝ միշտ սուգի օրերում բռնուած են, Փրկիչն՝ այս տեղ մեղաւորաց գարձն, հարսանիքի ուրախութեան կհամեմատէ, և այս ուրախութեան դիպուածումն՝ ծոմապահութիւնն՝ անտեղի կցուցնէ։ Ղևին՝ մաքսաւոր էր և մեղաւոր, այս մեղաց պաշտօնէն բաժնելու համար Յիսուս կանչեց զնա, և որ ուրախութեամբ հետևեցաւ նմա, և այս ուրախութեան պատճառաւ հիւրոյթ տուաւ Յիսուսին, և իրրև ուրախական հիւրոյթ, հրաւիրեց և իւր ընկերներն։ Մաքսաւորն ուրախ էր, որ մեծ վարդապետն՝ իւր հիւրն էր, Փրկիչն՝ ուրախ էր, որ մի մեղաւոր մարդ՝ արդարութեան կոչումն չը մերժեց, այս կրկնակի ուրախութիւնն՝ արդարև կհամեմատի հարսանիքի ուրախութեան։ Յիսուսի աշակերտներն՝ որ այս հարսանեաց պարաւորքն են, այս դէպքումն՝ ծոմ պահելէ ազատ են, և պիտի

պահեն այն օրերումն, երբ այսպիսի հարսանեկան ուրախութիւն չլինի։ Փարիսեցիք՝ այս առակին իմաստն չհասկացան լրիւ, վասնորոյ և Փրկիչն կը-յաւելու ուրիշ մի առակ։

«36. Ա-ակ ի Լս ասաց նոցա (ա-ղեւոլ)։ ոչ ոք նոր հանդերձէն հինցած հանդերձի վերայ չիքէր, ապա թէ ոչ՝ նոր (ռեզը) Լս կապարէ. նոր (հանդերձէն առնուած) կապերդն՝ հին կապերդին հետ չդիանար»։

Փրկիչն՝ իբրև քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի՝ նոր քահանայութիւն մի կկատարէր՝ Ահարոնեան քահանայութեան համեմատութեամբ։ այս նոր քահանայութեան գործն՝ ըստ մարգարէից այն էր, որ Աստուծոյ օրէնքները մարդկան սրտումն ու մտքումն գրէր, աստուածածանօթ անէր, նոր քահանայութեան այս գործն՝ Աստուծոյ պահանջած ողորմութիւնն է, զոր կատարեց Յիսուս մաքսաւորին կոչելով, նորա սեղանը բազմելով, և ըստ մարգարէին ուսուցանելով թէ՝

«Ողորմութիւն կամիմ Լ ո՛չ զոհս։ Լ զգիտութիւն՝ Աստուծոյ՝ քան զողջակէզս։» (Ովսէ Զ. 6)։

Նոր քահանայութեան այս ողորմութիւնն՝ որ իբրև ուրախութիւն կկատարուի՝ սուգի և ծոմապահութեան չյարմարիր, զոր կընդունէր Ահարոնեան քահանայութիւնն։ Փրկիչն՝ այս առակով հին քահանայութեան ապաշխարութեան ծոմապահութիւնն չժխտէր, այլ ինչպէս ասաց հարսանիքի առակու-

մին, թէ կոչեան օրեր, երբ փեսայն նոցանէն կվերցուի, ապա այն օրերումն կպահեն»։ ըստ այսմ՝ քրիստոնէութեան հաւատացեալքն ալ պիտի պահեն աստուածածանօթ լինելէն ետքն՝ երբ որ սուգ և տրտմութիւն ունենան Աստուծոյ օրինաց ճանապարհէն յանկգաստս գայթելով։ Նոր կապերտն՝ Փրկչի կատարած ողորմութեան ձևն է, հին հանդերձն՝ Ահարոնեան քահանայութեան պահքն է, որ միմեանց չեն միաբանիր։ Այս առակն ալ բաւական չհամարիր Փրկիչն, և կաւելցնէ միւս ևս առակ.

37. «Ոչ ոք՝ նոր գինին հին տիկերս ձեզ չլեցնէ« ապա թէ ոչ՝ նոր գինին՝ հին տիկերն կպայթեցնէ, ինքը կթափի, Լ տիկերն կկորսուին։ 38. Այլ նոր գինին՝ նոր տիկերս ձեզ պիտի լեցնել, Լ երկուքն Լս կպահուին»։

Այս առակն ևս միևնոյն նոր կապերտի առակին իմաստն ունի՝ և աւելի ևս՝ այն է՝ այն ինչ աստուածածանօթ եղող մեղաւորին՝ ո՛չ թէ տրտմեցնել՝ այլ ուրախ առնել և ուրախ լինել։ Նոր գինին՝ Փրկչին ուսուցման կերպն ու ողորմութիւնն է, նոր տիկքն նոր ուխտի հաւատացեալներն են. ինչպէս են Փրկչին աշակերտներն, և նոյն իսկ կանչուած մաքսաւոր։

39. Եւ ոչ ոք (չկայ)՝ որ հինը խմի, Լ նորն ուզէ, տանի կուտէ, թէ հինը տպորի պէս է»։

Փարիսեցիք և Յովհաննու աշակերտներն՝ թերևս

կխոստովանէին, թէ լաւ կասէ Փրկիչն այն առակներով, բայց դարձեալ կպնդէին, թէ ծոմը լուծել պէտք չէր, կամ թէ լաւ ևս էր, որ սղորմութեան գործումն ևս՝ պահքը պահուէր, որոց դէմ այսպէս կասէ, թէ «հնոյն սովորողներն նորը չեն ուզեր»։ Փրկիչն՝ այս առակներով ուսուցանելով՝ չըմերժեր Յովհաննու աշակերտաց պահքն, և իւր աշակերտներուն համար պահոց ժամանակ կնշանակէ իւր համբարձումն։

Այժմ Սուրբ Աւետարանի ընթերցուածի այս աւարտմանն՝ կպատշաճի, որ այս տեղ Հայաստանեայցս եկեղեցւոյ սահմանած և այժմ պահած պահքն՝ համեմատենք սուրբ գրոց սահմանած և արդարացուցած պահոց հետ։ Վասն զի ոմանք ժողովուրդք՝ մեր արդի պահքն անտեղի կհամարին, և կարհամարհեն, մինչդեռ պատուական է այն՝ ըստ սուրբ գրոց պատգամներուն, և ոչ արհամարհելի։ Այս համեմատութիւնը գիտնալ պէտք է մանաւանդ Զեզ՝ Շամախեցւոցդ, ըստ որում արհամարհողներէն ոմանք՝ նոյն իսկ ձեզմէն ծագած են. և այս արհամարհանքն յառաջ եկած է միայն տգիտութենէ։ Մեր ժամանակն այնպիսի մի ժամանակ է, որ շատ անգէտներ ևս իբրև գիտուն կպարծին, և այս մանաւանդ սուրբ գրոց գիտութեան մասին։ Սուրբ գրոց ընթերցուածն խոնարհութիւն կպահանջէ, ըստ որում սուրբ Հոգին կը

փախչի հպարտութենէ. խոնարհութիւնը՝ պարծենալ չունի, և չարհամարհեր և ոչ զոք։

Տեսնենք սուրբ գրոց աւանդութիւնը՝ ծոմապահութեան մասին։

Օրէնքներուն՝ չենք տեսներ այնպիսի յօրուած. որ ծոմապահութիւն սահմանէ, և ոչ որևիցէ դէպք՝ յորում ծոմապահութեան պայման մի երևի. բայց միայն Մովսէս երկու անգամ՝ քառասուն քառասուն օրեր Սինայի սարումն մնաց, մինչև տասն պատգամաց տախտակներն ստացաւ. և այս քառասնական օրերումն ոչ կերաւ և ոչ խմեց։

Մովսիսի այս դիպուածումն՝ կատարուած կտեսնենք օրինաց այն պատգամն, «Ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ՝ ամենայն բանիւ՝ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»։ (Բ. Օր. Ը. 3)։ Արդարև Մովսէս այս ծոմապահութեանց երկու քառասունքներումն Աստուծոյ խօսքերը կլսէր։

Թագաւորութեանց ժամանակ՝ Եսայի մարգարէի պատգամներումն՝ այսպիսի ինչ գիտողութիւն կը-յայտնէ Աստուած Հրէից ծոմապահութեան մասին.

«Կանչէ ուժով, և մի խնայեր. բարձրացո՛ւր ձայնդ՝ ինչպէս փողի ձայն, ժողովրդիս պատմէ նոցա մեղքերն, և Յակովբայ տունին՝ նոցա անօրէնութիւններն։ Ամեն օր զիս կփնդռեն, և ճանապարհներս ճանչնալ կցանկանան, իբրև ժողովուրդ

մի՝ որ արդարութիւն գործած լինի, և իւր Աստուծոյ իրաւունքը չթողած. այժմ եկել են արդարութեան իրաւունք կենդրեն։ Կարօտութիւն ունին, որ Աստուծոյ մօտ դան, և կասեն.

—«Այս ի՞նչ է, որ մենք ծոմ պահեցինք, և դու չտեսար. մեր անձերը խոնարհեցուցինք, և դու չգիտցար։

—«Վասն զի ձեր ծոմապահութեան օրերումն՝ ձեր կամքը կըկատարուի. և կկսկծեցնէք ամենքին՝ որ ձեր ձեռքին տակն են։

«Հակառակութեանց և կռիւներու մէջ էք, և ծոմ կպահէք, և աւագութիւն չունեցողին գըլխին կդարնէք. իսկ ինձ՝ ի՞նչ պէտք է այնպիսի աւուր ծոմն. դուք պիտի դայք ինձ բողոքէք, և ես չպիտի լսեմ։ Ո՛չ այդպիսի ծոմն ընտրեցի, և ո՛չ օրն՝ յորում՝ մարդ՝ իւր անձը կկարկամեցնէ (քաղցածութենէն խոնարհել)։ Վասն զի եթէ վիզդ ծռես անուրի պէս, և ներքևդ քուրձ ու մոխիր տարածես, սակայն՝ զայն ես ծոմ չանուանեցի, և ո՛չ ընդունելի օր, այնպիսի ծոմ՝ չընտրեցի կասէ Տէրն։

«Այլ՝ անիրաւութեան կնճիռը քանդէ՛, քո վաճառքներուդ բռնական խարդախութիւնը քակէ՛. նեղեալներն արձակէ՛ թողութիւն անելով, և անիրաւութեան ամեն մուրհակները պատռէ. Հացդ բրդէ՛ քաղցածներուն, տուն չունեցող աղքատներն

տունդ տար. եթէ մերկ մարդիկ տեսնես, հագուեցուր. և քո զաւակիդ ընտանիքէն՝ աչքդ վար չառնուս։ Այն ժամանակն կանուխ կծաւալի լոյսդ, և շուտով կհասնի քեզ բժշկութիւն. և արդարութիւնդ առջևէդ կերթայ, և Աստուծոյ փառքը չորս կողմդ կըռնեն։ Այն ժամանակը կկանչես, և Աստուած քեզ կլսէ. և դեռ ևս խօսելու որ լինիս, կասէ, թէ ահաւասիկ հասել եմ։ Եւ եթէ դու քեզմէն հեռացնես կնճիռը, ձեռնարձակութիւնը (ուրիշին վերայ ճնշումն գործել). և սրբընջելու խօսքերն, և քո հացը՝ քաղցածներուն տաս սրտի մտօք, և կարօտ մարդիկն կշտացնես. Այն ժամանակն խաւարի մէջ ևս կծագի քո լոյսն, և քո խաւարն՝ կէս աւուր պէս կլինի, և քո Աստուածն քեզ հետ կլինի ամեն ժամանակ. և ցանկութեանդ համեմատ կլիանայ անձդ, և ոսկորներդ կպարարին, և կլինիս ինչպէս մի ջրալի պարտէզ, և ինչպէս մի աղբիւր, ուստի ջուրը չըպակասեր»։ (Եսայի, գլ. ԾԸ. 1—11)։

Մարդարէն այս պատգամն տալով, մանր մանր կնկարագրէ հին հրէից ծոմապահութեան մերժուելուն պատճառներն, և կայտնէ, թէ Աստուած կընդունի արդարութիւն, իրաւունք, և ողորմութիւն.—այն է՝ Աստուծոյ սահմանած բարոյականն ճշդութեամբ պահել, ընկերին իրաւունքին զգուշանալ և չզրկել, և ողորմութիւն անել — մերկն

հաղուեցնել՝ քաղցածը կշտացնել։

Փարիսեցւոց պահած պահքն՝ այս մերժուած ծոմապահութեան կնմանի՝ զոր ուրիշ անգամ այսպէս կյանդիմանէ Յիսուս. «Վայ ձեզ դպիրներուդ և կեղծաւոր փարիսեցիներուդ՝ որ կոստանորդէք անանուխն և սամիթն և չամանն. և թողուցիք օրէնքէ ծանրնէրն—դատաստանն, ողորմութիւնը և հաւատքն»։ (Մատթ. ԻԳ. 23)։ Յիսուս Փրկիչ՝ մարգարէից պատգամացն համաձայն փարիսեցւոց կեղծ սրբութիւնը կմերժէ. բայց ծոմապահութիւնը չմերժէր՝ այլ կհաստատէ՝ թէ երբ ժամանակը գայ՝ իւր աշակերտներն ալ կպահեն։ ըստ այսմ՝

Յիսուսի համբառնալէն ետքն՝ աշակերտաց և հաւատացելոց մէջ կպաշտուէր ծոմապահութիւնն՝ որ կզօրանար ողորմութիւնն ընդարձակելու նկատմամբ. հաւատացեալներէն որոնք որ ստացուածոց տէր էին՝ կվաճառէին՝ և գինը կբերէին ընդհանուր միաբանութեան կյանձնէին՝ և որու որ պէտք լինէր՝ այն պիտոյքին կգործածէին. այս դրութիւնն՝ իսկապէս Աստուծոյ պատուիրած ընկերսիրութեան կատարեալ ողորմութիւնն էր՝ որ Աստուծոյ ընդունելի էր՝ ըստ որում՝ ունեցողն զինքն կզրկէր իւր ունեցածէն՝ և չունեցող ընկերին կմատակարարէր։ Առանց մախաղի՝ առանց քսակի ճանապարհորդութիւն՝ զոր Փրկիչը պատ-

ուիրեց՝ ծոմապահութիւններ շատ ունէր՝ և զոր յանձն առին առաքեալներն՝ և կկատարէին։

Քրիստոնէութիւնը շատ աղքերում՝ քարոզուելէ ետքն՝ երբ եկեղեցիներն հաստատուեցան ամեն կողմերում՝ քրիստոնէութեան բարոյականումն պարտաւորիչ եղած ողորմութիւնն կպաշտուէր անխափան՝ ուր որ պէտք լինէր՝ և ինչպէս որ պէտք լինէր։ Այս ողորմութիւնն ի դէպ ժամանակի կատարելու ձեռնհասութեան համար թերևս շատերն ծոմապահութիւնն կաւելցնէին։ Քրիստոնէութեան ծոմապահութիւնն՝ որոշ օր չունէր. այլ կամաւոր էր՝ որչափ որ ողորմութիւն անելու պէտքն աւելանար՝ այնչափ ալ ծոմապահութիւնն կաւելանար՝ որպէս զի իւրաքանչիւր ունեցող կարող լինէր իւր օրական ուտեստին մի մասն՝ տալ չունեցողին։ Աւանդութեամբ միայն կերևի՝ թէ իւրաքանչիւր եօթնեկի՝ չորեքշաբաթի և ուրբաթ օրերն պահոց օրեր էին։

Երբ քրիստոնէութեան հալածիչ արքունիքներն խոնարհեցան՝ և սուրբ Աւետարանի պատգամներն ընդունեցին՝ այն ժամանակ աւելի ևս ընդարձակեցաւ քրիստոնէութիւնն՝ և եկեղեցիներն՝ ամեն ազգաց մէջ յառաջադէմ էին քրիստոնէութեան ճշմարիտ բարոյականին շնորհիւն՝ և կարօտեալներ չկային՝ և եթէ սով կամ հալածանք պատահէր մի որևիցէ եկեղեցւոյ դէմ՝ ամեն կողմերէ կոգ-

նէին. մինչև իսկ եկեղեցիներն՝ իրենց սեպհական ագարակներէն և գիւղերէն՝ հեթանոս կարօտեալներու կօգնէին. ու նոցա հիւանդներն կդարմանէին։ Եղաւ այնպէս ժամանակ, որ կարօտեալներ չկային. և քրիստոնէական եկեղեցիներն՝ հանդիսական օրերում՝ եկեղեցիներու գաւթումն հասարակաց սեղան կկազմէին և մեծ և փոքր, մեծատուն և աղքատ՝ միևնոյն սեղանէն կվայելէին՝ ի յիշատակ առաքելական դարու եկեղեցւոյն միութեան՝ որոնք մի սիրտ և մի անձն էին։

Քրիստոնէութեան չորրորդ դարումն՝ եկեղեցիներէն ոմանց մէջ հեթանոսական բարոյից սովորութիւններ սկսեցին երևնալ՝ և այս՝ արբունի և աղնուազարմ տներէն սկսուած էր։ Այս ժամանակներն՝ որ կամաւոր ծոմապահութիւնը թեթևացել էր, և բարոյից անկման նշաններն հետզհետէ կաւելնային. եկեղեցիներն՝ այս անկման առաջն առնելու համար աղօթաւորաց և պահեցողաց կարգեր սահմանեցին, որոց օրինակին հետևող ժողովուրդներումն բարոյականի նշաններն սկսան վերստին հաստատուել։ Այս ժամանակ՝ և ծոմապահութեան փոխանակ կերակրոց կարգ որոշեցին, և աստուածայայտնութեանց պատգամներուն հետևելով, ծոմապահութեան յատուկ օրերումն՝ ծոմ չպահողներուն համար որոշ կերակուրներ սահմանեցին։

Կերակրոց խտրութիւններն՝ աստուածայայտնութեանց պատգամներէն առին ըստ այսմ.

Արարչագործութեան յայտնութեան պատգամներումն յայտնի գրուած է, թէ Ասաց մարդն Իրաւ՝ ոսկրանց իմ ոսկր է և պարանոց. (Ծնունդ. Ա. 29.)։ Իսկ ջրհեղեղէն ետքն՝ աւելցուց նաև մեղէններն ուտել, սուրբ կենդանիները միայն ուտել թոյլատրելով՝ զորս կթուէ Մովսէս Օրինաց կարգումն և կզանազանէ. միևնոյն ժամանակ՝ խստիւ կարգելէ, որ արիւնով միասին չուտեն։

Յայտնութեան այս պատգամներէն կերևի, թէ մարդուս բնութեան յատուկ կերակուրներն են միայն սերմերն ու պտուղներն. իսկ մեղէններն՝ կերակրոյ պակասութեան դէպքերում միայն կթոյլատրէ, իսկ արիւն ուտել կամ արիւնախառն ուտել՝ խստաւ կարգելէ Աստուած։ Մարդոյ բերանի կազմուածքն ևս կվկայէ, թէ միս ուտելու յարմար գործարան չէ։ Քրիստոնէական եկեղեցիներն՝ այս յայտնութիւններէն առնելով, կամաւոր ծոմապահութիւն չանողներուն՝ նշանակեցին պտղոց և հունդերու կերակուրներ գործածել, որոնք մարդու բնութեան կիրքերն չափաւորութեան մէջ կպահեն։

Կերակրոց խտրութեան այս դրութիւնն՝ աւելի առողջարար է. բայց այժմ զանազան ազգերում՝

պէսպէս հայեացքներով կարհամարհուի, և զանազան ազգերում կպահուի։ Բնագէտ բժիշկներ և քիմիկոսներ՝ կհաւանեն մեր եկեղեցւում որոշուած պահոց ժամանակներու բաշխմանը, թէ կարի յարմար ժամանակներ որոշել են մեղէն չուտել. ըստ որում այն ժամանակներն ընդհանրապէս կենդանիներու խառնման կամ ծննդեան ժամանակներ են, և կամ ձմեռնային խստութեան երեսէն՝ դոներում փակուած վատուժնալու ժամանակներ են։ Այս պահոց որոշումն արհամարհողներն՝ չգիտութեամբ կարհամարհեն։ Աստուծոյ արքայութիւնը՝ ոչ ուտելի է և ոչ ըմպելի, և իւրաքանչիւրն ոք պիտի ուտէ կամ չուտէ ոչ զրկելով, այլ նուիրելով և ողորմելով։ Աստուծոյ ողորմութիւնն պաշտող քրիստոնեայն՝ ընդհանրապէս արժանագին կերակուրներով կկերակրուի, որպէս զի աւելի կարողանայ ողորմել. իսկ ողորմութիւն չպաշտողներն՝ ըստ մեծի մասին թանկագնի կերակուրներ ուտեն, և ողորմութիւն անելու միջոցները կսեղմեն։ Ամեն քրիստոնեայ՝ պէտք է զգուշանայ, և Աստուծոյ հաճոյքը կատարէ։

Մեր երկիրներում հնտեղէն և մրգեղէն կերակուրներն՝ աւելի առատ են, վանորոյ և արժանագին. տան տնտեսավարն՝ եթէ գիտէ բարւոք կառավարել՝ իւր տնտեսութիւնը, բնականաբար շատ աւելի պիտի գործածէ հնտեղէններն, և ըստ այսմ կընթանայ Հայաստանումն ըստ մեծի մասին։ Սակաւաթիւ են այն ընտանիքներն, որ միսն առանձին ուտեն, այլ ընդհանրապէս մսի քանակութեան երկու անգամէն աւելի կանաչեղէն և հնտեղէն կխառնեն հետը, և մսին բնութիւնն ու թանկութիւնը կչափաւորեն։ Արևմտեան Ասիայում և ի մասնաւորի Հայաստանումն՝ խաշնարած հովիւներն անգամ սոսկ մեղեն չեն սիրեր. սոքա՝ երբեք սիրտ չեն աներ իրենց ուտելու նպատակաւ՝ մի գառն կամ ոչխար մորթելու. նորահաս հովիւները՝ կարծես մեծ ցանկութեամբ մի ոչխար կամ մի գառն մորթելու կվազեն, երբ որ մի հիւր կընդունին իրենց վրանումն. հիւրոյթէ դուրս ոչխար մորթելն՝ տան ուրեք կպատահի հովիւներուն։ Քիւրդ խաշնարածներն ևս այս միևնոյն սովորութիւն ունեն. որոց մէջ ըստ կրօնի՝ կերակրոյ որ և իցէ խտրութիւն սահմանուած չէ։ Այլ ըստ բնութեան՝ մենակեցութեան և սակաւաթիւ ընկերութեան մէջ՝ մարդոյս ախորժելի կերակուրներն կախորժեն, մրգեղէններն ու հնդեղէններն։

Վերջապէս. յայտնութեան պատգամներէն կըսովորենք, թէ մեղէններն՝ կերակուր են գազանաց և գիշատիչ թռչնոց, գալար խոտերն՝ կերակուր են անասնոց. իսկ հնտերն ու պտուղներն՝ կերարկուր են մարդոց։ Աստուածաշունչ պատգամաց յայտնութեան այս սահմաններուն տեղեակ լինելէ ետքն.

կտեսնենք, որ մարդն՝ իւր բնական կերակուրէն զատ՝ անասնոց և գազանաց յատուկ կերակուրն ևս ուտելու զիջեր է. և այս՝ ի հարկէ սովի և կերակրոյ պակասութեան դիպուածումն։ Մովսէս՝ իսրայելի որդւոց ականջին կրկնելով Աստուծոյ օրէնքը՝ կգուշակէ նոցա՝ թէ այնպիսի կարօտութեանց պիտի պատահին՝ (եթէ Աստուծոյ օրէնքներուն հետեն), որ մինչև անգամ իրենց մանուկներուն աղջիկներուն միսը պիտի ուտեն՝ այսպիսի մի սով կընկարագրուի Յովրամայ թագաւորութեան ժամանակ՝ սով։ յորում չկայ հնդեղէն և պտուղ պակասել է և դեղ գալար՝ պակասել է ամեն ուտելի մեղէն՝ և կտիպուին ուտել իրենց զաւակներն։

Սովերու այս սպառնալիքէն և նկարագրէն կհետևի՝ թէ մարդիկ՝ իրենց բնական կերակրոյն պակասութենէն՝ ստիպուած եղան անասնոց յատուկ բանջարներն և գազանաց յատուկ գէշերն ևս ուտել. և մինչև իսկ մարդոց միս ուտելու ստիպուել։ Մարդու յատուկ ախորժակին նայելով՝ աւելի դիւրին է անասնոց կերակուրին—բանջարեղինաց զիջանել՝ քան գազանաց կերակուրին—գէշերուն զիջանել. զորօրինակ՝ մի քաղցած մարդ՝ եթէ պատահի մի գոմէշի՝ որ կաղամբ կուտէ՝ և մի կատուի՝ որ մուկը կուտէ՝ այն քաղցած մարդն՝ աւելի քիչ գանելով պիտի ուտէ գոմէշի կերած կաղամբէն՝ քան կատուի կերած մուկէն։

Կերակուրների նկատմամբ՝ մարդուն բնութիւնն՝ այսպէս տեսնելով հանդերձ՝ այսօր կպատահենք այնպիսի մարդկան՝ որոնք իրենց ախորժակն կբացատրեն ասելով. «Այնչափ խոտ (բանջարեղէն) կերանք՝ որ այլ ևս անասուն դարձանք»։ Այս ախորժակը բացատրող մարդիկ՝ եթէ շարունակեն ուտել մեղէն՝ պիտի բացատրեն իհարկէ՝ «Այնչափ լէշ կերանք՝ որ այլ ևս գազան դարձանք»։ Այս երկու տգեղ ախորժակներն կերևի մարդում՝ ոչ բնական կերակուրներէն՝ իսկ եթէ ուտեն միշտ բնական կերակուրն — հնդեղէններ և պտուղներ՝ այն ժամանակ միայն յագուրդ և զուարթութիւն պիտի զգան՝ և երբեք պիտի չզղջին։

Եթէ արդարև խոտը կանասնացնէ՝ և միսը կգազանացնէ զմարդ։ Այս երկու չարեաց փոքրագոյնն ընտրել պէտք է։ Անասնոց բնութեան հեզութիւնն աւելի կպատշաճի մարդուն՝ քան գազանի գազանութիւնն՝ որ յափշտակիչ է և գիշատիչ։ Այս նկատմամբ՝ մեր եկեղեցում սահմանուած պահքն—կերակրոց խստութիւնն՝ աւելի ևս կյարմարի մարդկային բարոյից. վասնորոյ և պատուական է, և ոչ արհամարհելի։

Հայաստանեայց եկեղեցոյ սահմանած պահքն՝ ընկերսիրութեան բարոյականին մի պահանջն հաւասարութիւնն ևս կկատարէ։ Դիցուք թէ արդար իւղն՝ ձուկն՝ և ձուն՝ ընդիր կերակուրներ են. վասնորոյ և թանկագին՝ եթէ կարող ընտանիքներն՝ սահմանուած օրերումն չպահեն այս կերակուրներէն՝ և անխտիր ուտեն՝ այս կերակուրներն աւելի ևս կսպառին և կթանգանան. և ըստ այնմ իսպառ անհասանելի կլինեն աղքատներուն։ Իսկ եթէ պահեն ըստ օրինի և կարող ընտանիքներն՝ այն ժամանակ կառատանան այս կերակուրներն՝ և ըստ

այնմ կարժանան։ Հետևաբար և աղքատներն ևս ձեռնհաս կլինեն այն կերակուրներուն, որ հաւասարասիրութեան գործ է, և գովելի ընթացք քրիստոնէական բարոյականի։

Տեսնելով, թէ կերակրոց խստութիւնն՝ քրիստոնէական բարոյականի պահանջած ընկերսիրութեան մի պայմանն է, պահպանել պէտք է այս սահմանը, որով մի եկեղեցւոյ ժողովուրդն՝ իբրև մի ընտանիք՝ իւր մէջ պատրաստուած բարիքներն հաւասարապէս պիտի վայելեն ըստ պատուիրանին Աստուծոյ։ Յորում թերևս պիտի նկատեն հարուստներն՝ թէ իրենք պիտի զրկուին իրենց հաճոյքէն։ բայց միևնոյն ժամանակն՝ իրենց ընկերներն՝ իրենց անձերուն հաւասար սիրած պիտի լինեն և Քրիստոսի պատուէրը կատարած։ Ուրեմն զգուշանանք պահել եկեղեցւոյ սահմանած պահքն, և այսպէսով ևս մեր ընկերներն՝ մեր անձերուն հաւասար սիրելու քրիստոնէական պարտքերնիս կատարենք։

Աստուծոյ արքայութիւնն՝ ո՛չ ուտելիք է, և ո՛չ ըմպելիք. այլ սէր Աստուծոյ և սէր ընկերին։ Որչափ որ կարող ենք, հետևենք կատարեալ լինել ընկերսիրութեան բարոյականումն. պահենք կերակրոց խստութեան պահքն ևս, որով դիւրութեան տուած պիտի լինենք և մեր ընկերներուն, որ մեզ հաւասար կարողանան վայելել Աստուծոյ մատակարարած բարիքները։ Եւ Տէր Աստուած՝ իբրև ընկերսիրութեան պարտիք ընդունի մեր պահեցողութիւնը։ Խոնարհենք Աստուծոյ կամացն, որ չմերժէ մեր պահքն՝ փարիսեցւոց կեղծաւորութեան հետ։

ԿԻՐԱԿՈՍ ԱՐՔԻՊ. ՍՐԱՊԵԱՆՑ

Ի 1 3--ել-1890 ՀԱՅԵՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ի Շ--ԼԽ Պետական Գրադարան
Աղվանի գ/կրոնական էջերով
22
Ա. ՄՅԱՍՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ

2076
<< Ազգային գրադարան >>
NL0029052

2020